բեր ու ձորեր, անտառներ ու դաշտեր են չափ-
չիում։

Այդ դաժան և սանձարձակ թուրք բէկերի
համարձակութեան ու յանդգնութեան չափ ու
սահման չկայ. ինչ որ իրենց քէֆն ու սիրտը ու-
զեն, այն էլ կանեն արձակ ու համարձակ։ Ահա-
ւասիկ, իմ ընթերցող, ձեզ հպօր փաստեր, որոնք
պատահել են տողերիս գրողի աչքերի առաջ,
1897 և 1900 թ. հետևեալ կերպով։ 1897 թ. նըս-
տած մի գիրք էի կարդում իմ հայրական տան
սիրուն բակի մի հաստարմատ տանձենու շուաքի
տակ։ Եղբայրներս իրենց հնձուոր մշակներով
զբաղուած էին իրենց երկրագործական դաշտայ-
ին աշխատանքներով։ Այնպէս որ տան մէջ մնա-
ցել էին կանայքն ու փոքրիկ երեխաները և հա-
կէսօրին մեր տան բակի դարբասի մեծ դուռը
սկսեցին բաղխել և թուրքերէն ինչ-որ անո-
րոշ խօսքեր ասել։ Մայրս՝ որ իւր սրտի կարօտն
առնելու համար նստած էր կողքիս և գիշեր ու
ցերեկ չէր հեռանում իւր սիրելի որդու մօտից,
յանկարծ շփոթուեց և հասկացրեց ինձ, որ շու-
տով սենեակ մտնեմ և եկող անկոչ հիւրերին եր-
բէք չերևամ։ Զարմացած ու ապշած հարցրի մօ-
րիցս.—Ո՞վքեր են եկող ձիաւոր թուրքերը և ի՞նչ
են կամենում ձեզանից։—Բումեցի ձիաւոր մի
քանի թուրքեր են եկել և ուզում են տանել ճաշ-
կերոյթի համար շինուած ընկուզէ ծալովի սեղա-
նը X բէկի համար։—Ինչո՞ւ, արդե՞օք, մեր տան
սեղանը ծախե՞լ էք թուրքի վրայ։—Ա՜խ, տէրտէր
Ջան, դու փոքր երեխայութիւնից հեռացար մեր